ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/265

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝

Ն. Հակոբյանի (լիազորագիր՝ տրված 13.10.2021թ.),

Է. Հովհաննիսյանի (լիազորագիր՝ տրված 13.10.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.10.2021թ. թիվ 26/26-1/16632-2021 գրությամբ «Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 04.10.2021թ. թիվ 39/02-28-763 գրության հիման վրա, 12.10.2021թ. թիվ 26/26-1/16632-2021 գրությամբ նախաձեռնել է

«Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը</u>.

«Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ն, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 13.10.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

««Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգի կապակցությամբ սույնով ներկայացնում եմ ընկերության դիրքորոշումը:

Սույն ընթացակարգը նախաձեռնվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքով, այն փաստերի հիման վրա, որ «Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, հանձնաժողովը ընկերությանը առաջարկել է շտկել արձանագրված անհամապատասխանությունները, սակայն արձանագրված անհամապատասխանությունները դարձյալ չեն շտկվել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ համաձայն.

«Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

(...)

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գեման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը»:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվելու այս հիմքը կարող է դրսևորվել հետևյալ արարքներից որևէ մեկով՝

-պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, կամ

-գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

Ընդ որում, նշված արարքները պետք է հանգեցրած լինեն պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Քննարկվող դեպքում պայմանագրով նախատեսված պարտավորության խախտումը բացակայում է, քանի որ պայմանագիր չի կնքվել:

Նախաձեռնողը նկատի է ունեցել, որ առկա է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, որը դրսևորվել է Հրավերով նախատեսված Հավելված 1.3-ը՝ Իրական շահառուների վերաբերյալ հայտարարությունը, ինչի արդյունքում «Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

Գնման գործընթացը քաղաքացիաիրավական հարաբերություն է՝ կապված պատվիրատուին ապրանքների մատակարարման պայմանագիր կնքելուն և կատարելուն: Քաղաքացիաիրավական հարաբերություններում պարտավորությունը կարող է ծագել պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նշված այլ հիմքերից, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ մասի:

Եթե խոսում ենք գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության մասին, ապա այդ պարտավորությունը պետք է ծագած լինի սուբյեկտի ազատ կամահայտնությամբ, այսինքն՝ գնման գործընթացում պայմանագրային հարաբերություններում:

Գտնում եմ, որ քննարկվող դեպքում իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտավորությունը չպետք է դիտվի գնման գործընթացի քաղաքացիաիրավական հարաբերություններում «Էֆֆեկտ գրուպ» ՓԲ ընկերության ստանձնած պարտավորություն:

Ընդունում եմ, որ նշված պարտավորությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտավորություն է, դրա չկատարումը հանդիսանում է խախտում և հիմք է հանդիսանում հայտն անբավարար գնահատելու և մերժելու համար: Սակայն օրենքի

այս պահանջն ընդամենը գնման գործընթացին մասնակցելու պարտադիր պայման է, և ոչ թե՝ գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորություն, իսկ այդպիսի պահանջը խախտելը հանդիսանում է գնման գործընթացին մասնակցելու պայմանի չապահովում, և ոչ թե՝ գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում:

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.10.2021թ. թիվ 2 արձանագրության մեջ նշված է. «Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները՝ «Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել»:

Նախ նկատենք, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը հայտն անբավարար գնահատելու և մերժելու հիմքեր չի սահմանում, այլ սահմանում է, թե որ սուբյեկտները չեն կարող մասնակցել գնման գործընթացին: Իսկ նույն մասի 6-րդ կետը վերաբերում է այն սուբյեկտներին, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Այս իրավական հիմքով հայտը անբավարար գնահատվել և մերժվել չէր կարող՝ առնվազն նշված ցուցակում <<Էֆֆեկտ գրոպ>> ՓԲԸ-ի ներառված չլինելու հանգամանքից ելնելով:

Հայտը անբավարար գնահատելու և մերժելու հիմքը սահմանված է Օրենքի 34-րդ հոդվածով, որի 1-ին մասի համաձայն. «Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են »:

Ինչպես երևում է, հայտն անբավարար գնահատելու և մերժելու հիմք է ոչ թե ստանձնած պարտավորության խախտումը, այլ՝ հրավերի պայմաններին չհամապատասխանող հայտ ներկայացնելը: Վերջինս թեև հիմք է անբավարար գնահատելու և մերժելու համար, սակայն հիմք չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ցանկանում եմ նաև նշել, որ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր չներկայացնելը եղել է տեխնիկական թերացում՝ պայմանավորված օրենքի վերջին փոփոխությունը աշխատակցի կողմից ոչ լիարժեք տիրապետելու հանգամանքով, այդ թերացումը պայմանավորված չէ հայտարարագիր ներկայացնելուց խուսափելու

հանգամանքով կամ այլ շարժառիթով: Այսինքն, այս թերացումը չպետք է հիմք ընդունվի ընկերության, որպես գնման գործընթացին մասնակցող սուբյեկտի, մատակարարման հարաբերություններում նրա վարքագծի բարեխղճությունը, արտադրանքի որակը գնահատելու և գնման գործընթացներին մասնակցության իրավունքը սահմանափակելու համար:

Ինչ վերաբերում է հետևանքին, ապա իրական շահառուների վերաբերիալ հայտարարագիր չներկայացնելու խնդրո առարկա թերացումն ընդամենը հանգեցրել է նրան, որ ընկերությունը չի համարվել ընտրված մասնակից, որը մեր գնահատմամբ չի հանգեցնում պատվիրատուի կամ պետության համար բացասական հետևանքների:

«Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ն տարիներ շարունակ մասնակցել է գնումների գործընթացներին, բազմաթիվ դեպքերով կնքել է պայմանագրեր, մատակարարման պարտավորությունները կատարել պատշաճ: Միայն վերջին երկու տարիների ընթացքում գնումների գործընթացներով ընկերությունը կնքել է շուրջ 34 հատ պայմանագրեր, ժամանակին մատակարարել ընդհանուր 53,829,484 ՀՀ դրամ արժեքի որակյալ արտադրանք:

Ելնելով վերոգրյալից, խնդրում եմ «Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/265 ընթացակարգի շրջանակներում 14.10.2021թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր իրենց հերթին պնդել են վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 04.10.2021թ. թիվ 39/02-28-763 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ 2021 թվականի սեպտեմբերի 23-ին, ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում ժամը 10:00-ին տեղի է ունեցել ապրանքների

ձեռքբերման ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/132 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստը:

«Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 03317278, հեռ. +37460610909, էլ. հասցե՝ tigrans@effectgroup.am) կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտով ներկայացված Հավելված 1-ի 3-րդ պարբերությունում նշված չէ մասնակցի անվանումը, ինչպես նաև բացակայում է իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը: Եթե «Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ն «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձ չէ, կամ եթե այդպիսի իրավաբանական անձ է սակայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ պարտավոր չէր իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցել իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները, ապա դիմում-հայտարարությունը լրացնելիս «տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը» բառերը պետք է փոխարինվեր «հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.3-ի» բառերով և հայտով ներկայացվեր նաև հրավերով նախատեսված հավելված 1.3-ը:

Գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և 27.09.2021թ. համակարգի միջոցով ծանուցմամբ «Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով սահմանված պահանջները:

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ի կողմից գնման ընթացակարգի հրավերում նշված էլեկտրոնային հասցեին ներկայացվել է նոր Հավելված 1, սակայն արձանագրված անհամապատասխանությունները դարձյալ չեն շտկվել:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները:

Համաձայն Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների՝ «Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում ենք Ձեզ՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն գնման ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաները ներառված են հաստատված գնումների պլանում և հրապարակված են տեղեկագրում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/265 ընթացակարգի շրջանակներում 14.10.2021թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/265 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/265 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպվել է «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/132» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.10.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 23.09.2021թ. նիստը հայտարարվել է բացված, այնուհետև նույն արձանագրության 4-րդ կետի 6-րդ ենթակետով արձանագրվել է, որ «Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ի սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտով ներկայացված Հավելված 1-ի 3-րդ պարբերությունում նշված չէ մասնակցի անվանումը, ինչպես նաև բացակայում է իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը: Եթե

«Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ն «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձ չէ, կամ եթե այդպիսի իրավաբանական անձ չէ, կամ եթե այդպիսի իրավաբանական անձ է սակայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ պարտավոր չէր իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցել իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները, ապա դիմում-հայտարարությունը լրացնելիս «տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը» բառերը պետք է փոխարինվեր «հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.3-ի բառերով և հայտով ներկայացվեր նաև հրավերով նախատեսված հավելված 1.3-ը: Հավելված 1-ով նշել են, որ ցանկանում են մասնակցել նաև 12-րդ չափաբաժնին, մինչդեռ Հավելված 1.1-ով, Հավելված 2-ով վերջինիս վերաբերյալ տեղեկատվություն ներկայացված չէ, armeps համակարգում էլ տվյալ չափաբաժնի մասով գնային առաջարկ չի ներկայացվել: 6-րդ չափաբաժնի մասով Հավելված 2-ով ներկայացված գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը չի համապատասխանում ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին:

3. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել 27.09.2021թ. նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 27.09.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ի կողմից գնման ընթացակարգի հրավերում նշված էլեկտրոնային հասցեին սահմանված ժամկետում ներկայացվել է Հավելված 1-ի նոր տարբերակը, սակայն արձանագրված անհամապատասխանությունները դարձյալ չեն շտկվել և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.10.2021թ. թիվ 26/26-1/16632-2021 գրությունը, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 04.10.2021թ. թիվ 39/02-28-763 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը, ինչպես նաև գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե ***հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ***, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպվել է «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/132» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.10.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 23.09.2021թ. նիստը հայտարարվել է բացված, այնուհետև նույն արձանագրության 4-րդ կետի 6-րդ ենթակետով արձանագրվել է, որ «Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ի սույն գնման

ընթացակարգին մասնակցության հայտով ներկայացված Հավելված 1-ի 3-րդ պարբերությունում նշված չէ մասնակցի անվանումը, ինչպես նաև բացակայում է իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը: Եթե «Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ն «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձ չէ, կամ եթե այդպիսի իրավաբանական անձ չէ, կամ եթե այդպիսի իրավաբանական անձ է սակայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ պարտավոր չէր իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցել իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները, ապա դիմում-հայտարարությունը լրացնելիս «տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը» բառերը պետք է փոխարինվեր «հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.3-ի բառերով և հայտով ներկայացվեր նաև հրավերով նախատեսված հավելված 1.3-ը: Հավելված 1-ով նշել են, որ ցանկանում են մասնակցել նաև 12-րդ չափաբաժնին, մինչդեռ Հավելված 1.1-ով, Հավելված 2-ով վերջինիս վերաբերյալ տեղեկատվություն ներկայացված չէ, armeps համակարգում էլ տվյալ չափաբաժնի մասով գնային առաջարկ չի ներկայացվել: 6-րդ չափաբաժնի մասով Հավելված 2-ով ներկայացված գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը չի համապատասխանում ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել 27.09.2021թ. նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 27.09.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ի կողմից գնման ընթացակարգի հրավերում նշված էլեկտրոնային հասցեին սահմանված ժամկետում ներկայացվել է Հավելված 1-ի

նոր տարբերակը, սակայն արձանագրված անհամապատասխանությունները դարձյալ չեն շտկվել և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Պատվիրատուն 04.10.2021թ. թիվ 39/02-28-763 գրությամբ նշել է, որ ***2021 թվականի սեպտեմբերի 23-ին***, ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում ժամը 10:00-ին տեղի է ունեցել ապրանքների ձեռքբերման ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/132 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ***հայտերի բացման և գնահատման նիստը:***

Ընկերությունը 13.10.2021թ. ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը. «...գտնում եմ, որ քննարկվող դեպքում իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտավորությունը չպետք է դիտվի գնման գործընթացի քաղաքացիաիրավական հարաբերություններում «Էֆֆեկտ գրուպ» ՓԲ ընկերության ստանձնած պարտավորություն:

Ընդունում եմ, որ նշված պարտավորությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտավորություն է, դրա չկատարումը հանդիսանում է խախտում և հիմք է հանդիսանում հայտն անբավարար գնահատելու և մերժելու համար: Սակայն օրենքի այս պահանջն ընդամենը գնման գործընթացին մասնակցելու պարտադիր պայման է, և ոչ թե՝ գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորություն, իսկ այդպիսի պահանջը խախտելը հանդիսանում է գնման գործընթացին մասնակցելու պայմանի չապահովում, և ոչ թե՝ գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում»:

Այս մասով հարկ եմ համարում հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 02.09.2019թ. թիվ 02/16.4/5128-2019 գրության հիման վրա, 03.09.2019թ. թիվ 26/26-1/14672-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն արձանագրել է, որ «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ն Ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, և առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, քանի որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի ներկայացրել հրավերով նախատեսված հայտի N 1 հավելվածի շտկված տարբերակն աշխատակիցների թվի մասով, կամ որևէ այլ հիմնավորում հայտի N 1 հավելվածում նշված աշխատակիցների թվով հրավերով նախատեսված աշխատանքների կատարման հնարավորության վերաբերյալ և որոշում կայացրել «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

«Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ն 11.10.2020թ. հայցադիմում է ներկայացրել դատարան՝ ընդդեմ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի, երրորդ անձինք ՀՀ քաղաքաշինության կոմիտեի, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ՍՑ-ՆԳ-2019/150 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Դատարանի կողմից 09.09.2020թ. կայացվել է թիվ ԵԴ/33670/02/19 վճիռը, համաձայն որի հայցը բավարարվել է. մասնավորապես անվավեր է ճանաչվել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 26.09.2019թ. ՍՑ-ՆԳ-2019/150 որոշումը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 26.02.2021թ. թիվ ԵԴ/33670/02/19 որոշմամբ եկել է հետևյալ եզրակացության.

«Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Համաձայն Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ

առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի ե պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոնշյալ նորմերի վերլուծության արդյունքում Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ գնումների գործընթացի մասնակիցը ընդգրկվում է դրանց մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում է թույլ տվել, որը գնման

գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանն է հանգեցրել: Գնման գործընթացի շրջանակում մասնակցի ստանձնած պարտավորության խախտում է համարվում հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հրավերով նախատեսված փաստաթղթերը չներկայացնելը:

Տվյալ դեպքում Ընկերությունը հայտնել է, որ Նախարարությունը, Կոմիտեի 02.09.2019 թվականի թիվ 02/16.4/5128-2019 գրության հիման վրա, 03.09.2019 թվականի թիվ 26/26-1/14672-2019 գրությամբ նախաձեռնել է Ընկերության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ, որի հիմքով Պատասխանողի կողմից 23.09.2019 թվականին կայացվել է թիվ ՍՑ-ՆԳ-2019/150 որոշումը, որով Ընկերությունն ընդգրկվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ Պատասխանողի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով, որպիսի որոշումն անհիմն է, քանի որ Կարգի 42-րդ կետով նախատեսված է, որ հայտը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում այն գնահատվելու է անբավարար և մերժվելու է, իսկ Պատասխանողը որոշել է Ընկերությանն ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, խնդրել է որոշումն անվավեր ճանաչել:

Դատարանը վճռով հայցը բավարարել է հետևյալ պատճառաբանությամբ. «...գնումներին մասնակցելու անձանց ցուցակում ներառելը որոշակի տնտեսական հետևանքներ է առաջացնում հայցվորի համար, հետևաբար գնումներին մասնակցելու իրավունքը հանդիսանում է գույքային իրավունք, որն իրավաբանորեն իրացվող իրավունք է: Հանդիսանալով գույքային իրավունք, այն օգտվում է ինչպես ներպետական օրենքներով սահմանված պաշտպանության միջոցներից, այնպես էլ թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված պաշտպանությունից, ուստի ցանկացած միջամտություն այդ իրավունքի իրացմանը պետք է կատարվի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի պահանջներին համապատասխան: Նախ, դատարանը պետք է պարզի, թե արդյոք տեղի է ունեցել միջամտություն: Հաշվի առնելով, որ հիշատակված ցուցակում ներառելը որոշակի հետևանքներ է ունենում տնտեսվարող սուբյեկտի համար, որն արտահայտվում է 2 տարի ժամանակով գնումների մասնակցության արգելք, ուստի դատարանը գտնում է, որ այն հանդիսանում է միջամտություն: Հաջորդ հարցը, որ պետք է պարզի դատարանը, արդյոք այդ

միջամտությունը նախատեսված է օրենքով: Ինչպես վերը նշվեց, գնումների մասին օրենքը նախատեսում է անձին ցուցակում ներառելու հետևյալ պայմանը, երբ անձը խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը:

Դատարանը որոշակի անհստակություն և անհամապատասխանություն է տեսնում օրենքի համապատասխան ձևակերպման և Կարգի միջև: Այսինքն, կիրառման ենթակա իրավական նորմի որակը բավարար չէ անձանց համար հասկանալի ու կանխատեսելի լինելու համար: Հստակ և կանխատեսելի չէ, թե գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունները որոնք են, որոնց դեպքում կարող է կիրառվել խնդրո առարկա սահմանափակումը: Դատարանը գտնում է, որ Կարգի 41-րդ կետով նախատեսված անճշտությունը չուղղելը չի կարող հետևանք առաջացնել, քանի որ այն հանդիսանում է ոչ թե պարտավորություն, այլ իրավունք, հետևաբար անճշտությունը վերացնելու համար սահմանված ժամկետում այն չվերացնելը չի կարող հիմք հանդիսանալ անձին գնումներին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու համար: Բացի այդ, դատարանը գտնում է, որ խախտվել է նաև միջամտության համաչափության պահանջը, քանի որ կիրառված միջոցը պետք է համաչափ լինի հետապնդվող նպատակին: Դատարանը գտնում է, որ գնման գործընթացում ցանկացած բացթողում կամ սխալ չի կարող հանգեցնել նույն հետևանքին և այդպիսի դասակարգման բացակայությունն ինքնին կարող է հանդիսանալ համաչափության սկզբունքի խախտում»:

Գործի քննությամբ հիմնավորվել է այն հանգամանքը, որ «Գլոբալ Ինժեներ» ՍՊ ընկերությունը ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2019 թվականի օգոստոսի 13-ին հայտարարված ‹‹ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/14›› ծածկագրով ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել:

«Գլոբալ Ինժեներ» ՍՊ ընկերության կողմից 23.08.2019 թվականին ներկայացվել է գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարություն:

«ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/14» ծածկագրով ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի 27.08.2019թ. նիստի թիվ 2-2 արձանագրության համաձայն՝ «Գլոբալ Ինժեներ» ՍՊ ընկերության հայտում արձանագրվել է անհամապատասխանություն.

1.1 կետի դ) ենթակետի համաձայն՝ «Գլոբալ Ինժեներ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Հավելված N 1-ի 3-րդ կետում նշված է, որ պայմանագրի կատարումն իրականացվելու է թվով 7 աշխատակիցների միջոցով՝ հրավերով պահանջվող նվազագույնը 9 աշխատակիցների փոխարեն:

1.2 կետի համաձայն՝Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ին № 526-Ն որոշմամբ հաստատված ‹‹Գնումների գործընթացի կազմակերպման›› կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել կասեցնել նիստը և ծանուցել 1.1 կետում նշված մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները:

2.1 կետի համաձայն՝ Գնման ընթացակարգի հանձնաժաղովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 2019 թվականի օգոստոսի 29-ին ժամը 11:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում…:

«Գլոբալ Ինժեներ» ՍՊ ընկերության կողմից շտկումն իրականացվել է 29.08.2019 թվականին, ժամը 12:48:52-ին:

«ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/14» ծածկագրով ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.08.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Գլոբալ Ինժեներ» ՍՊ ընկերության հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից որպես արձանագրված անհամապատասխանությունների շտկում, սահմանված ժամկետում փաստաթղթեր չեն ներկայացվել:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 02.09.2019 թվականի թիվ 02/16. 4/5128-2019 գրության հիման վրա, 03.09.2019 թվականին թիվ 26/26-1/14672-2019 գրութամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանի 26.09.2019թ. թիվ ՍՑ-ՆԳ-2019/150 որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության

ֆինանսների նախարարության 03.09.2019թ. թիվ 26/26-1/14672-2019 գրությամբ «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարվել է և «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ն ընդգրկվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

Վերոնշյալ նորմերի կանոնակարգումների և գործի փաստական հանգամանքների հաշվառմամբ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Դատարանի եզրահանգումն իրավաչափ չէ հետևյալ պատճառաբանությամբ.

Տվյալ դեպքում անվիճելի փաստ է, որ Ընկերությունը Կոմիտեի կողմից 2019 թվականի օգոստոսի 13-ին հայտարարված ‹‹ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/14›› ծածկագրով ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել, գնահատող հանձնաժողովի 27.08.2019թ. նիստում ընկերության հայտում արձանագրվել է անհամապատասխանություն, <u>որը շտկելու համար վերջինիս տրվել է մեկ աշխատանքային օր, սակայն այդ ժամկետում շտկումը չի կատարվել:</u>

<u>Վերաքննիչ դատարանը գտնում է, որ վերը նշված գործողությունները կատարելով Ընկերությունը հիմքեր է առաջացրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն, վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունն այն մասին, որ որպես գործընթացի մասնակից հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացրել հրավերով նախատեսված փաստաթղթերը, որը հանգեցրել է գնման գործընթացին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը:</u>

<u>Դատարանն անտեսելով Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի վերը նշված պահանջը եկել է սխալ հետևության, այն մասին, որ հայցը հիմնավոր է,</u> միևնույն ժամանակ իր եզրահանգումների հիմքում դնելով Կարգի 41-րդ հոդվածի

կանոնակարգումները, մինչդեռ Դատարանը վերոնշյալի հաշվառմամբ պետք է գար հայցը մերժելու վերաբերյալ հետևության:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ առկա են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ վճիռը բեկանելու և փոփոխելու՝ հայցը մերժելու մասին դատական ակտ կայացնելու լիազորությունը կիրառելու հիմքերը, քանի որ գործով հաստատված փաստական հանգամանքները նման դատական ակտ կայացնելու հնարավորություն են տալիս և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից»:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշումը զուրկ է որևէ իրավական հիմնավորումից:

Այնուամենայնիվ, Պատվիրատուի կողմից տրամադրված Ընթացակարգին առնչվող փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի ***նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից,*** ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում՝ համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը ***նույն օրը*** դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Այսինքն՝ Կարգի 41-րդ կետով սահմանված է, հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարի համար էլեկտրոնային եղանակով նույն օրը դրա մասին մասնակցին ծանուցելու իմպերատիվ պահանջ, որի չպահպանման դեպքում, կարող են անտեսվել այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը և հանգեցնել սխալ մեկնաբանման:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Այսպիսով՝ գործում առկա փաստական հանգամանքների և կիրառման ենթակա իրավական նորմերի համադրման արդյունքում՝ արձանագրում եմ, որ թիվ 2 արձանագրության համաձայն՝ ***<u>23.09.2021թ.</u>*** Ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի կողմից Ընկերության հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ, որպիսի փաստը հաստատվել է նաև Պատվիրատուի կողմից լիազոր մարմնին ուղղված գրությամբ, մինչդեռ՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ Ընկերությանը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով ծանուցել է ***27.09.2021թ***., այսինքն՝ Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետի և իրավական որոշակիության սկզբունքների պահպանման պահանջների խախտմամբ:

Նման պայմաններում գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողություններից բխող բացասական հետևանքները չեն կարող հանգեցնել «Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.10.2021թ. թիվ 26/26-1/16632-2021 գրությամբ «Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**